

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 14/2

2 սեպտեմբերի 2014 թ.

Քննարկվեց «ԼՈՒՎԻ-ԲԻՄԲԻ» ՍՊԸ 01.08.2014 թ-ի դիմումով բերված գանգատը ՀՀ ՖՆ ՕՀՎ 07.07.2014 թ-ի թիվ 1004660 ստուգման ակտի դեմ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 11.02.2014 թ-ի թիվ 1004660 հանձնարարագրի համաձայն «ԼՈՒՎԻ-ԲԻՄԲԻ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Ընդ որում, ստուգման հանձնարարագրի հրապարակման համար հիմք է հանդիսացել ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչության 3-րդ բաժնի քննիչ Վ.Ռ.Հակոբջանյանի մասնագիտական ստուգում նշանակելու մասին 24.12.2013 թ-ի որոշումը: Ստուգման արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ ՕՀՎ 07.07.2014 թ-ի թիվ 1004660 ստուգման ակտը, որով շահութահարկի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 1.287.922 դրամ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ֆրանսիական «Բեյբի Դիոր Ս.Ա.Ս. առելիես մոդելս» կազմակերպության կողմից «ԼՈՒՎԻ-ԲԻՄԲԻ» ՍՊԸ անվամբ 21.04.2011 թ-ի թիվ 42066 հաշիվ-ապրանքագրով Ֆրանսիայի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն 177.2 կգ բրուտո և 160 կգ նետո քեշերով 32.424 եվրո (17.807.26 ՀՀ դրամ) մաքսային արժեքով մանկական հագուստներ արտահանելու դեպքի առթիվ ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասի և 205-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 84102313 քրեական գործը, որը ներկայումս գտնվում է մինչդատական վարույթի փուլում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն. «Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը»:

Քննարկվող դեպքում, հաշվի առնելով վերը նշված փաստական հանգամանքները Հանձնաժողովը գտնում է, որ անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը, մինչև քրեական դատավարության կարգով որոշում կայացնելը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ «ԼՈՒՎԻ-ԲԻՄԲԻ» ՍՊԸ

